ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 02.03.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-01/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.06.2016թ. թիվ 1/73-3/15804-16 և 26.12.2016թ. թիվ 03/73-3/28616-16 գրություններով ներկայացված «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 05306014) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-01/17 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-01/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 28.02.2017թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 01.06.2016թ. թիվ ԴՎԱ/1464 գրության հիման վրա, 06.06.2016թ. թիվ 1/73-3/15804-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի

առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 27.06.2016թ. թիվ 01/04.1/2542-16 գրությամբ կատարված ուսումնասիրության արդյունքում Նախարարությանը ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է, որ «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունները խախտվել են ավելի քան մեկ անգամ և վերոնշյալ խախտումները հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, սակայն Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 06.06.2016թ. թիվ 1/73-3/15804-16 գրությամբ ներկայացված «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն, քանի որ գործում առկա չէ որևէ տեղեկատվություն «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 22.04.2016թ.-ից, հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 26.12.2016թ. թիվ 03/73-3/28616-16 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին է ուղարկել ՀՀ պաշտպանության նախարարության 19.12.2016թ. թիվ ԴՎԱ/3978 գրությունը, ըստ որի վերջինիս կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸՀԱՇՁԲ-10/4 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով ***06.12.2016թ.*** հայտ է ներկայացրել «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ն և հայտնել, որ անհրաժեշտ է սահմանված կարգով նախաձեռնել «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

2. «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Կրեդոստրոյ» ՍՊԸ-ն 06.02.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից թույլ չեն տրվել ապրանքի մատակարարման ժամկետների բազմիցս խախտումներ, այլ ընդամենը մեկ անգամ է խախտվել Պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված մատակարարման ժամկետը (ապրանքը չի մատակարարվել մինչև 2014թ. 3-րդ եռամսյակը):

Կրեդոստրոյ» ՍՊԸ-ն վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև բացի հիմնական պայմանագրով նախատեսված ժամկետից, որևէ այլ լրացուցիչ ժամկետներ համաձայնագրով կամ այլ եղանակով չեն սահմանվել, որը կխախտվեր Ընկերության կողմից, ուստի Պատվիրատուի կողմից Պայմանագիրը 3.1.7.1 կետի «բ» ենթակետով լուծելը ոչ իրավաչափ է:

3. ՍՑ-ԳԲԽ-01/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 26.12.2016թ. թիվ 03/73-3/28616-16 գրությամբ ներկայացված «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) միջև 19.06.2014թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-7/39-1» ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

2. Պայմանագրի թիվ 2 հավելվածով պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել 2014թ.-ի 3-րդ եռամսյակը (մինչև 2014թ. հոկտեմբերի 31-ը), սակայն սահմանված ժամկետում, ըստ ՀՀ ՊՆ-ի, Ընկերության կողմից չեն մատակարարվել 19.06.2014թ. ՀՀ պաշտպանության նախարարության և «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, սահմանված, 2014թ.-ի 3-րդ եռամսյակում մատակարարման ենթակա, 80 հատ 4 տեսակի ճաշարանախոհանոցային սեղանները, մասնավորապես՝ 1-ն չափաբաժին՝ արտադրական սեղան չ/պ, քանակը՝ 50 հատ, 2-րդ չափաբաժին՝ կարտոֆիլի վերամշակման սեղան չ/պ, քանակը՝ 10 հատ, 3-րդ չափաբաժին՝ արտադրական սեղան շարժական չ/պ, քանակը՝ 10 հատ, 4-րդ չափաբաժին՝ մթերաթափոններ հավաքելու սեղան չ/պ, քանակը՝ 10 հատ:

3. Պայմանագրի 3.1.7 կետը սահմանում է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

4. Պայմանագրի 3.1.7.1 կետը սահմանում է, որ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները:

5. Պատվիրատուն 22.04.2016թ.ին ԴՎԱ/1426 գրությամբ միակողմանի լուծել է «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև կնքված Պայմանագիրը մինչև Պայմանագրի գնման ժամանակացույցով նախատեսված վերջնաժամկետը (2014թ. հոկտեմբերի 31-ը)՝ նշված ապրանքատեսակները չմատակարարելու հիմքով:

6. Կենտրոնը 27.06.2016թ. թիվ 01/04.1/2542-16 գրությամբ կատարված ուսումնասիրության արդյունքում Նախարարությանը ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է, որ «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, այն է՝ «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունները խախտվել են ավելի քան մեկ անգամ և վերոնշյալ խախտումները հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, սակայն Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 06.06.2016թ. թիվ 1/73-3/15804-16 գրությամբ ներկայացված «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն, քանի որ գործում առկա չէ որևէ տեղեկատվություն «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 22.04.2016թ.-ից, հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ:

7. ՀՀ ֆինանսների նախարարությունը 26.12.2016թ. թիվ 03/73-3/28616-16 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն) է ուղարկել ՀՀ պաշտպանության նախարարության 19.12.2016թ. թիվ ԴՎԱ/3978 գրությունը, ըստ որի վերջինիս կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸՀԱՇՁԲ-10/4 ծածկագրով գնման

ընթացակարգին մասնակցելու նպատակով ***06.12.2016թ.*** հայտ է ներկայացրել «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ն և հայտնել, որ անհրաժեշտ է սահմանված կարգով նախաձեռնել «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

8. «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ն 06.02.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից թույլ չեն տրվել ապրանքի մատակարարման ժամկետների բազմիցս խախտումներ, այլ ընդամենը մեկ անգամ է խախտվել մատակարարման ժամկետը (ապրանքը չի մատակարարվել մինչև 2014թ. 3-րդ եռամսյակը): «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև բացի հիմնական պայմանագրով նախատեսված ժամկետից, որևէ այլ լրացուցիչ ժամկետներ համաձայնագրով կամ այլ եղանակով չեն սահմանվել, որը կխախտվեր Ընկերության կողմից, ուստի Պատվիրատուի կողմից Պայմանագիրը 3.1.7.1 կետի «բ» ենթակետով լուծելը ոչ իրավաչափ է:

4. <u>ՍՑ-ԳԲԽ-01/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 28.02.2017թ. եզրակացությունը և առաջարկել ՀՀ ֆինանսների նախարարության 06.06.2016թ. թիվ 1/73-3/15804-16 և 26.12.2016թ. թիվ 03/73-3/28616-16 գրություններով ներկայացված «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 05306014) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը մերժել՝ Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքերի բացակայության հիմքով:

5. <u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.06.2016թ. թիվ 1/73-3/15804-16 և 26.12.2016թ. թիվ 03/73-3/28616-16 գրությունները, ՀՀ պաշտպանության նախարարության 19.12.2016թ. ԴՎԱ/3978 և 01.06.2016թ. թիվ ԴՎԱ/1464 գրությունները և

կից փաստաթղթերը, «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ի 06.02.2017թ., Խորհրդին ուղղված գրությունը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ***որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) միջև 19.06.2014թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-7/39-1» ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի թիվ 2 հավելվածով պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել 2014թ.-ի 3-րդ եռամսյակը, սակայն սահմանված ժամկետում՝ ըստ ՀՀ ՊՆ-ի Ընկերության կողմից չեն մատակարարվել 19.06.2014թ. ՀՀ պաշտպանության նախարարության և «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, սահմանված, *2014թ.-ի 3-րդ եռամսյակում (մինչև 2014թ. հոկտեմբերի 31-ը)* մատակարաման ենթակա, 80 հատ 4 տեսակի ճաշարանախոհանոցային սեղանները, մասնավորապես՝ 1-ն չափաբաժին՝ արտադրական սեղան չ/պ, քանակը՝ 50 հատ, 2-րդ չափաբաժին՝ կարտոֆիլի վերամշակման սեղան չ/պ, քանակը՝ 10 հատ, 3-րդ չափաբաժին՝ արտադրական սեղան շարժական չ/պ, քանակը՝ 10 հատ, 4-րդ չափաբաժին՝ մթերաթափոններ հավաքելու սեղան չ/պ, քանակը՝ 10 հատ:

Պայմանագրի 3.1.7 կետը սահմանում է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

Պայմանագրի 3.1.7.1 կետը սահմանում է, որ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները:

Պատվիրատուն, *հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը,* (**բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները**), 22.04.2016թ.ին ԴՎԱ/1426 գրությամբ միակողմանի լուծել է «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև կնքված Պայմանագիրը՝ մինչև Պայմանագրի գնման ժամանակացույցով նախատեսված վերջնաժամկետը (2014թ. հոկտեմբերի 31-ը)՝ նշված ապրանքատեսակները չմատակարարելու հիմնավորմամբ:

«Կրեդոստրոյ» ՍՊԸ-ն Խորհրդին ուղղված 06.02.2017թ. գրությամբ հայտնել է, որ ***Ընկերության կողմից թույլ չեն տրվել ապրանքի մատակարարման ժամկետների բազմիցս խախտումներ, այլ ընդամենը մեկ անգամ է խախտվել Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, սահմանված մատակարարման ժամկետը, այն է՝ ապրանքը չի մատակարարվել մինչև 2014թ. 3-րդ եռամսյակը:***

«Կրեդոստրոյ» ՍՊԸ-ն վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ ***«Կրեդոստրոյ» ՍՊԸ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև բացի հիմնական պայմանագրով նախատեսված ժամկետից, որևէ այլ լրացուցիչ ժամկետներ համաձայնագրով կամ այլ եղանակով չեն սահմանվել, որը կխախտվեր Ընկերության կողմից***, ուստի Պատվիրատուի կողմից Պայմանագիրը 3.1.7.1 կետի «բ» ենթակետով լուծելը ոչ իրավաչափ է:

Ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ի միջև 19.06.2014թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/39-1» ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագրի 3.1.7.1 կետը, Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, սահմանված մատակարարման ժամկետը, Պատվիրատուի Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ Ընկերությանն ուղղված 22.04.2016թ. ԴՎԱ/1426 գրությունը, ինչպես նաև «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ի Խորհրդին ուղղված 06.02.2017թ. գրությունը, Խորհուրդն արձանագրում է, որ Պատվիրատուն «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 19.06.2014թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/39-1» ապրանքի գնման պայմանագիրը 3.1.7.1 կետի «բ» ենթակետով լուծելով, այն է՝ ***Ապրանքի***

մատակարարման ժամկետները բազմիցս խախտման հիմքով, գործել է ոչ իրավաչափ, քանի որ Ընկերության կողմից թույլ չեն տրվել ապրանքի մատակարարման ժամկետների **բազմիցս խախտումներ**, այլ ընդամենը մեկ անգամ է խախտվել Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, սահմանված մատակարարման ժամկետը, այն է՝ ապրանքը չի մատակարարվել մինչև 2014թ. հոկտեմբերի 31-ը:

Միևնույն ժամանակ սույն բողոքի քննության ընթացքում Խորհրդին չեն ներկայացվել Պայմանագրով նախատեսված ժամկետից բացի, այլ լրացուցիչ ժամկետ սահմանող որևէ համաձայնագիր և այլն:

Բացի այդ, Պատվիրատուն 19.06.2014թ.-ին կնքված Պայմանագիրը, ապրանքը մինչև **2014թ. հոկտեմբերի 31-ը** չմատակարարելու հիմքով, միակողմանի լուծել է միայն **22.04.2016թ.**-ին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 06.06.2016թ. թիվ 1/73-3/15804-16 և 26.12.2016թ. թիվ 03/73-3/28616-16 գրություններով ներկայացված «Կրեդոստրոյ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 05306014) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը մերժել՝ Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքերի բացակայության հիմքով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Գևորգ Հայրապետյան**

Անդամ՝ **Տաթևիկ Զոհրաբյան**